

Էմմա Ա. Կոստանդյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆՈՒՄ

Ծննդյան 150-ամյակի առթիվ*

Երկրաչափի և իրավաբանի բարձրագույն կրթություն ստացած Գրիգոր Զոհրապը 1883 թ. սկսած զբաղվել է փաստաբանությամբ և իրավագիտություն է դասավանդել Կ. Պոլսի Գար-յուլ-ֆյունուն համալսարանում: Տիրապետելով ֆրանսերենին, ռուսերենին, թուրքերենին, հունարենին ու բուլղարերենին, իր աշխատանքային գործունեության առաջին իսկ օրերից նա աչքի է ընկել փաստաբանի փայլուն ունակություններով, ինչի հետևանքով հանրահայտ է դարձել արևմտահայ իրականության մեջ:

1880-ականների վերջերից սկսած՝ արևմտահայությունը շարունակաբար Զոհրապի թեկնածությունն էր առաջադրում՝ նրան Ազգային ժողովի երեսփոխան ընտրելու համար: Այսպես՝ Խարբերդի հոգևոր թեմի առաջնորդի, գավառական ժողովի ատենապետի և ատենադպրի ստորագրությամբ հաստատված մի փաստաթղթով դեռևս 1888 թ. սեպտեմբերի 27-ին ծանուցվում էր Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդ Սիմոն Սեֆերյանին, որ երեք անձից բաղկացած ընտրելիների ցուցակում քվեների բացարձակ առավելությամբ Ազգային ժողովի երեսփոխան է ընտրվել Գրիգոր Զոհրապը: Սակայն պատրիարքարանը չվավերացրեց այդ ընտրությունը, որովհետև Ազգային Սահմանադրության համաձայն՝ ընտրյալի տարիքը պետք է լիներ 30 և ավելի, մինչդեռ, Զոհրապն այդ ժամանակ դեռևս 27 տարեկան էր:

1891-ին, երբ Կ. Պոլսում ընթանալու էին Ազգային ժողովի պատգամավորների թափուր տեղերի ընտրությունները, Զոհրապի անունը մտցվեց մի քանի թաղերի ընտրելիների ցուցակի մեջ: Քանի որ Գուգլունճուզ թաղամասում նա ստացավ քվեների բացարձակ մեծամասնությունը, մյուս տեղամասերը այլևս չքվեարկեցին Զոհրապի անդամության հարցը: Սակայն Ա.Արփիարյանի բնութագրումով՝ Կ. Պոլսի «պահպանողական վարչութեան ղեկավար» Հովհաննես Նուրյանի անմիջական նախաձեռնությամբ Զոհրապի ընտրության վավերացման հարցը նույ-

* Դոկլածն ընդունվել է տպագրության 26.11.2011:

նիսկ չդրվեց քվեարկության՝ դարձյալ տարիքի պատճառաբանությամբ: Ու չնայած հաջորդ նիստերում ապացուցվեց նաև նրա 30 տարեկանը լրացած լինելու փաստը, սակայն «բռնապետությունն իր միակ Աստուածը համարող» Նուրյանը, հաշվի չառնելով մի խումբ երեսփոխանների պահանջները, հարցը կրկին չդրեց քվեարկության, և Չոհրապի ընտրությունը համարվեց չեղյալ՝ «բեկեալ»:

1894 թ. ընտրությունների ժամանակ ևս Քաղաքական ժողովը հատուկ տեղեկագիր ներկայացրեց, ըստ որի՝ Չոհրապը երեսփոխան չի ընտրվել: Համիդյան «գուլումի» տարիներին՝ զանգվածային կոտորածների ժամանակ, դադարել էին Ազգային ժողովի նիստերը, իսկ Մ. Օրմանյանի պատրիարքության շրջանում նիստերը տեղի էին ունենում հավաքությունների անվան տակ, որովհետև վտանգ կար, որ արյունոտ սուլթանը ամեն լուր կարող է կասեցնել Ազգային Սահմանադրությունը: Մինչդեռ համիդյան կոտորածների ժամանակ՝ 1895-1896 թթ., Չոհրապը, ցուցաբերելով քաղաքական մեծ արիություն, ստանձնում է հայ բանտարկյալների պաշտպանությունը, բազմաթիվ դատեր է շահում և մեծ թվով անմեղ կյանքեր փրկում:

1902 թ. Չոհրապին Կ. Պոլսից հեռացնելու նպատակով Աբդուլ-Համիդը կայսերական հրովարտակով նրան նշանակում է Չանդըրի կառավարչի օգնական: Դա արքային հավասարազոր պաշտոն էր, ուստի դրանից խուսափելու համար նա դիմեց ռուսական դեսպան Իվան Չինովևին, որը Չոհրապին նշանակեց դեսպանատան փաստաբան-իրավախորհրդատու: Քիչ անց՝ 1905 թվականին, երբ թուրք գայմագամը խոշտանգել էր մի բուլղար հեղափոխականի և նրա դեմ դատ էր բացվել, փաստաբանությունը ստանձնում է անվեհեր Չոհրապը: Դա էր պատճառը, որ Թուրքիայի արդարադատության նախարարը նրան գրկեց դատապաշտպանի և փաստաբանի իրավունքից, իսկ տպագրական տեսչությունն արգելեց անգամ գրական ստեղծագործությունների տպագրությունը, նույնիսկ՝ անվան հիշատակությունը մամուլում: Չոհրապը ստիպված էր համեմատաբար կարճ ժամանակով հեռանալ Եվրոպա (Ֆրանսիա), սակայն երիտթուրքական հեղաշրջումից հետո նա վերադարձավ Կ. Պոլիս:

Այդ օրերին տարբեր գավառական ժողովներում կրկին բարձրացվեց Չոհրապին Ազգային ժողովի երեսփոխան ընտրելու հարցը: 1908 թ. օգոստոսի 8-ին Չմյուռնիայի գավառական ժողովում քվեների բացարձակ առավելությամբ Չոհրապն ընտրվեց Ազգային ժողովի պատգամավոր, սակայն նրա հակառակորդները, որոնք ստացել էին աննշան քանակությամբ քվեներ, մամուլում նյութեր հրատարակեցին ընտրության իբր՝ «սպօրինի» լինելու մասին: Եվ շուտով Չոհրապն ինքը մամուլում հանդես եկավ հրաժարականով, վճռականորեն հայտարարելով, որ չի ցանկանում դառնալ ազգային անհամաձայնության առարկա: Միայն 1908 թ. օգոստոսի 24-ին՝ Կ. Պոլսի միացյալ երկու թաղամասերում կայացած քվեարկության ժամանակ (Սամաթիա և Թոփ-Գարու) Չոհրապը քվեների բացարձակ մեծամասնությամբ ընտրվեց Ազգային ժողովի երեսփոխան:

Սուլթանի 1908 թ. հուլիսի 13-ի իրադեոլ (հրովարտակով) վերահաստատված Միդիատյան սահմանադրության հիման վրա սկսվեցին նաև Օսմանյան խորհրդարանի անդամների ընտրությունները: Խորհրդարանում (մեջլիս) հայերին հատկացվեց 10 տեղ, որից երկուսը՝ Կ. Պոլսում: Երկու տեղի համար իրենց թեկնածությունն առաջադրեցին 6 հոգի, որոնցից առաջին իսկ քվեարկության ժամանակ առավելագույն քվե (61-ից՝ 45) ստացած Գրիգոր Չոհրապն ընտրվեց Օսմանյան

ՕՄԻ ԴԳԻՄՆՉ

Գ. (Թ) ԳԱՐԻ, ՔԻՎ 4 (36) ԽՈԿԵՆՔԵՐ-ՐԵԿԿԵՆՔԵՐ, 2011

ՎԵՄ ԽԱՆՈՒՄԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

խորհրդարանի անդամ, իսկ երկրորդ քվեարկության ժամանակ մյուս երեսփոխան ընտրվեց Պետրոս Հալաճյանը: Մակայն դրանով թնջուկը չհարթվեց. հետադիմական ուժերը միավորվեցին Չոհրապի դեմ՝ միասնական պայքար մղելու համար: Գործի անցավ թուրքական մամուլը՝ պնդելով, որ «ռուսական դեսպանատան հայ պաշտոնեան», որը ծառայել է «ռուսական նենգամիտ ու անգութ քաղաքականութեանը» և նույնիսկ ընդունել ռուսահպատակություն, իրավունք չունի լինելու Օսմանյան խորհրդարանի անդամ:

Թուրքական մամուլի հերյուրանքներին պատասխանեց հայկական մամուլը, իսկ Չոհրապյն ինքը մեկնաբանեց, որ երբեք չի փոխել քաղաքացիությունը և միշտ էլ եղել է օսմանահպատակ: Միայն այդ բոլորից հետո Իթքիհատի կոմիտեն համաձայնեց, որ Կ.Պոլսից խորհրդարանի հայ անդամներ լինեն Գրիգոր Չոհրապյը և Պետրոս Հալաճյանը: Բայց դրանով կնճիռը չհարթվեց: Քիչ անց՝ 1908 թ. նոյեմբերի 22-ին, Իթքիհատի կոմիտեն մոռանալով իր ստորագրությունը, Սալիմ բեյին ուղարկեց հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի մոտ՝ Չոհրապի ընտրությունը չեղյալ հայտարարելու պահանջով: 1908 թ. վերջերին դրան հետևեց արևմտահայության միահամուռ դիմադրությունը, որի պատճառով սպարոյուն անցան բազում մեքենայությունները:

Առաջին՝ 1908 թ. ընտրությունը ամենաձանր փորձությունն էր, որը գերազանց հաղթահարեցին և՛ Չոհրապյը, և՛ նրա բազմաթիվ անկեղծ համակիրները: Դրանից հետո նա Օսմանյան խորհրդարանի անդամ ընտրվեց ևս երկու անգամ՝ 1912 և 1914 թվականներին՝ միշտ էլ հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ:

Այսպիսով, արևմտահայ հասարակական շրջանակներում մեծ հռչակ ձեռք բերած Գրիգոր Չոհրապյը 1908 թ. օգոստոսին ընտրվելով Հայոց Ազգային ժողովի երեսփոխան, իսկ նոյեմբերի վերջին՝ Օսմանյան մեջլիսի մեքուս, մինչև իր եղերական մահը՝ 1915 թ. հունիս ամիսը, հավատարմորեն իր պարտքը կատարեց հարազատ ժողովրդի առջև՝ դառնալով բազմաթիվ կնճռոտ հարցերի քննարկման և լուծում առաջարկելու գործի եռանդուն մասնակիցը և՛ Ազգային ժողովում, և՛ Օսմանյան խորհրդարանում:

Ուսումնասիրելով Ազգային ժողովի ատենագրությունները և Օսմանյան խորհրդարանում հնչած Չոհրապի ելույթները, ինչպես նաև՝ հայկական մամուլում հրապարակված հաղորդումներն ու տեղեկատվությունները, զարմանում ու հիանում ենք, թե մեկ պատգամավորն ինչպե՞ս է կարողացել ծավալել այդքան բազմաբնույթ գործունեություն: Չոհրապյը ելույթներ է ունեցել Ազգային ժողովի և Օսմանյան խորհրդարանի գրեթե բոլոր նիստերում, մասնակցել բազմաթիվ հարցերի քննարկումներին, ներկայացրել անհրաժեշտ առաջարկություններ և ձեռնամուխ եղել դրանց իրականացմանը: Բայց նա չի բավարարվել սոսկ պաշտոնական ելույթներով. տպավորիչ էին տարբեր առիթներով հրավիրված համաժողովրդական հավաքներում, Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում հնչած Չոհրապի բանախոսությունները: Լինելով արևմտահայերենի հմուտ գիտակ, նա հոյակապ տիրապետում էր նաև թուրքերենին, ուստի ժողովրդի առջև ելույթ էր ունենում և՛ թուրքերեն, և՛ հայերեն: Թուրքերը զարմանում էին Չոհրապի գիտելիքների ու հմտությունների վրա և խոստովանում էին, որ իրենցից ոչ ոք չի կարող նրա թուրքերեն ելույթներին հավասարը հնչեցնել:

Չոհրապյը չէր պատկանում որևէ քաղաքական կուսակցության, բայց համակիր էր Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Ուստի պատահական չէ, որ երբ

1908 թ. օգոստոսին ՀՅԴ Կ.Պոլսի Պատասխանատու մարմինը Սամաթիա թաղի Սահակյան վարժարանում բանախոսություն է կազմակերպում Օսմանյան Սահմանադրության վերաքննության հարցի վերաբերյալ, իբրև բանախոս հրավիրվում է Գրիգոր Չոհրապը: 1908 թ. օգոստոսի 19-ին «Արևելքը» այս առիթով գրում էր, որ «...Չոհրապին անունը բավական էր համախմբելու ստուար բազմութիւն մը, որով լեցուած էր Սամաթիո Սահակեան վարժարանը»¹: Չոհրապի նախորդ ելույթները գրեթե միշտ հնչել էին թուրքերեն, բայց այդ դեպքի հետ կապված «Մանգումեն» մեծ գոհունակությամբ տեղեկացնում էր. «Առաջին անգամն էր, որ հասարակութիւնը բեմի վրա պիտի լսեր Չոհրապը հայերէն լեզուով»²:

Ունկնդիրներին հանգամանալից կերպով պարզաբանելով «Սահմանադրություն» հասկացության էությունը, Չոհրապը բացատրում էր, որ այդ արժեքին իր նվիրվածության իմաստով արևմտահայությունն ավելի առաջադիմական է եղել տիրապետող ազգությունից և նրա պետական կառույցներից, քանզի Արևմտահայոց Ազգային սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1860, իսկ սուլթանի կողմից հաստատվել՝ 1863 թվականին: Նրա կարծիքով, Օսմանյան սահմանադրության վերաքննության վերաբերյալ իր առաջարկած պայմանները բխում են «համորեն Օսմանեան ազգին օգուտեն»³, որովհետև օսմանյան երկրում «պետութեան գորութիւնը ճնշիչ ու բռնադատիչ գործիք մը դարձած է սակավաթիւ մարդոց ձեռքը» և նրանք իրենց գործողություններով հակված են «ազատ քաղաքացիները ստրուկի վերածելու»⁴: Ընդգծելով, որ պետության հիմնական գործն է «կեանքի պայքարին մեջ» թև ու թիկունք կանգնել իր ժողովրդին, Չոհրապը դրականորեն էր վերաբերվում Օսմանյան սահմանադրության վերաքննության հարցին: Արձանագրելով, որ Օսմանյան կամ Միդիաստյան սահմանադրությունը հաստատվել է 30 տարի առաջ, նա հիշեցնում էր, որ վերջինիս հիմնադիրներից մեկը Գրիգոր Օտյանն էր, ով «Ճշմարտապես շքեղապես հայ մը և Օսմանցի եղավ»⁵: Սուլթան Համիդի հրամանով Միդիաստի սպանությունից հետո նա հեռացավ Ֆրանսիա, այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն և թողված է Պեր-Լաշեզի գերեզմանատանը: Ցավելով դրա համար, Չոհրապը միաժամանակ նշում էր, որ Օսմանյան սահմանադրության վերաքննության գաղափարը հիմնավորված է նրա 116-րդ հոդվածով: Բանախոսը պարզաբանում էր, որ սահմանադրության վերաքննության պահանջը չի դրվում ո՛չ նախարարների խորհրդի, ո՛չ էլ Ավագների ժողովի անդամների կողմից, որովհետև համիդյան բռնապետության օրերից՝ 30 տարի շարունակ «պետական մարդոց այդ երկար շարքը հաջորդաբար և փոխնիփոխ նախարարական, դեսպանական, վալիութեան» և այլ պաշտոններ վարելով, մասնակցել են «սահմանադրութեան դադարման դավաճանութեանը»⁶: Ու քանի դեռ նրանք շարունակում են պաշտոններ զբաղեցնել, փաստորեն Սահմանադրության թշնամիները վարում են սահմանադրական պետության կարևոր պաշտոնները: Ավելին՝ Չոհրապը պնդում էր, որ Ավագների ժողովը կազմավորվել է «կարգ մը մարդասպաններ և ավազակներ»⁷, միայն թե դրանք ո՛չ Շիլլերի ավազակներն են, ո՛չ էլ

1 «Արևելք», Կ. Պոլիս, 1908., օգոստոսի 19, N 6877:

2 «Մանգումենի էֆքիար», Կ. Պոլիս, 1908, օգոստոս 20/2 սեպտեմբեր, N 2205:

3 **Գրիգոր Չոհրապ**, Երկերի ժողովածու, յավելեալ հատոր (ե), գիրք առաջին, աշխատասիրութեանը Ալբերտ Շարուրեանի, Եր., 2004, էջ 55:

4 Նույն տեղում, էջ 57:

5 Նույն տեղում, էջ 67:

6 Նույն տեղում, էջ 62:

7 Նույն տեղում, էջ 64:

Բակունինի անարխիստները, այլ «Նազըմ փաշայի պես արիւնաթաթաւ ուրուական մը»⁸: Պնդելով, որ Օսմանյան ազգը իր ճակատագիրը նման անձանց ձեռքը հանձնելով՝ Ավագների ժողովը դարձնում է «թիարան», Չոհրապը պահանջում էր ընտրության իրավունք չափահաս բոլոր անձանց համար՝ անկախ սեռից, ազգությունից և ունեցվածքից: Այս համարձակ ելույթով նա փաստորեն ընդգծում էր, որ Սահմանադրությունը ոչինչ չի փոխել Թուրքիայում:

Չոհրապի բանախոսության հատուկ ուշադրության առարկան էին Սահմանադրության 11-րդ և 16-րդ հոդվածները, որոնք վերաբերում էին կրոնական առանձնաշնորհումներին, ինչպես նաև ապակենտրոնացման սկզբունքն առաջադրող 108-րդ հոդվածը, որը խիստ անհրաժեշտ էր հայկական գավառների համար: Բազմաթիվ այլ հոդվածներ քննարկելուց հետո, հիմնավորելով ամեն ազգի՝ «իր գոյութիւնը պահպանելու և զարգանալու իրաւունքը»⁹, Չոհրապը իր բանախոսության ավարտին ընդգծեց, որ «շատ յարգելի և պարտատրիչ են օսմանեան քաղաքացիութեան կապերը»¹⁰, որոնք ամրապնդելու համար պետք է ջանք քափեն հավասարապես բոլոր ազգությունները: Ընդունելով օսմանյան «միասնական հայրենիքի» գաղափարը, Չոհրապը կոչ էր անում իր հայրենակիցներին. «Ազգութեանց դարաւոր հանգոյցները կարելի չէ գրչի մեկ շարժումով, մեկ ժամուան մեջ լուծել, մեջտեղեն բառնալ: Համբերութեան, խոհեմութեան, կամքի մեծ պաշար պետք է ունենալ»¹¹:

Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ ժամանակին Չոհրապը նույնպես տարվել է երիտթուրքերի խոստումներով, հավատացել նրանց: Սակայն սա հրապարակային բանախոսություն էր: Երիտթուրքերի իշխանության գալու հենց առաջին ամիսներին Չոհրապը հիմնավորում էր կայսրության տարբեր ժողովուրդների համագործակցության անհրաժեշտությունը, բայց միաժամանակ նրանց դաստիարակության, թերությունները բացահայտելու, ինչպես նաև փոխադարձ կասկածներն ու տարակույսները վերացնելու կոչ էր անում:

Չոհրապի քաղաքական գործունեությունն արտացոլվել է նաև հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում հնչած նրա բազմաթիվ այլ ելույթներում: Կան հարցեր, որոնք նա զուգահեռ կերպով բարձրացրել է վերոհիշյալ երկու մարմիններում: Դրանցից ամենակարևորը ոչ իսլամների զինվորագրության խնդիրն էր:

1909 թ. մարտի 22-ին Բերայի Ս.Երրորդության եկեղեցում կազմակերպված հայկական հանրահավաքի ժամանակ առաջադրելով ոչ իսլամների զինվորագրության խնդիրը, Չոհրապն այն դիտում էր Օսմանյան սահմանադրությունից բխող՝ ազգերի իրավահավասարության իրավունքի տեսանկյունից: Արձանագրելով, որ ոչ իսլամներին չզինվորագրելը խեղաթյուրում է հավասարության սկզբունքը և խտրություն է դնում տարբեր ազգերի միջև, Չոհրապը պահանջում էր վերացնել զինվորական տուրքը՝ բեղելը ասկերիեն, ելնելով երկու սկզբունքից. նախ՝ տնտեսապես քայքայված հայր ի վիճակի չէ զինվորական տուրք վճարել և երկրորդ՝ ամենակարևորը, դա պիտի «խեղաթիւրե հավասարութեան սկզբունքն ու վիրավորիչ խտրութիւն մը պիտի բերե այն դրոշին տակ ապրող ազգերուն մի-

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, էջ 66:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 67:

ջել»¹²:

Քանի որ հեղաշրջումից հետո «հավասարություն, եղբայրություն, ազատություն» կարգախոսը մնացել էր լոկ իբրև կարգախոս, այս հանրահավաքից 2-3 ամիս անց՝ 1909 թ. հունիսի 3-ին, Չոհրապը ելույթ է ունենում Օսմանյան խորհրդարանում: Նա վճռականորեն պահանջում է ոչ մի դեպքում ոչ իսլամներից զինվորական տուրք չպահանջել: Չոհրապի կարծիքով, քանի որ «զինուորագրութիւնը սահմանադրութեան համաձայն ամեն քաղաքացիի տրուած իրաւունք մըն է»¹³, այդ պատճառով կառավարությունն իրավունք չունի ոչ իսլամներից զինվորական տուրք պահանջել, այլ անհրաժեշտ է նրանց զինվոր վերցնել:

Նույն՝ 1909 թ. հունիսի 22-ին խորհրդարանը նորից է քննարկում ոչ իսլամներից զինվորական տուրք գանձելու հարցը: Չնայած արդեն մեկ տարի էր անցել երիտթուրքական հեղաշրջումից և այսպես կոչված՝ Օսմանյան սահմանադրության հռչակումից, բայց խորհրդարանի թուրք անդամները համաձայնության են գալիս, որ մի տարի ևս՝ 1909-ին, ոչ իսլամներից զինվորական տուրք վերցնեն և միայն 1910-ից փորձեն նրանց զինվորագրել: Խորհրդարանում նորից վիճաբանություն է սկսվում: Հիմնական ընդդիմադիրը Չոհրապն էր. նա պահանջում էր, որ խորհրդարանի մեծամասնությունը հարգի փոքրամասնության իրավունքները, և ընդունվի օրենք՝ «Սահմանադրութեան համաձայն բոլոր օսմանցիները զինուոր պետք է տան»¹⁴:

Իվան երեսփոխանները հայերի կողմից զինվորական տուրքից հրաժարվելը բացատրում էին նրանով, որ վերջիններս և մյուս քրիստոնյաները նյութական շահ են ուզում ապահովել: Հարցի քննարկումը շարունակվում է, և 1909 թ. օգոստոսի վերջին Չոհրապը Օսմանյան խորհրդարանի բուլղար պատգամավորների հետ միասին պահանջում է հարգել իրենց իրավունքները: Արևմտյան Հայաստանի հեռավոր անկյուններից հայերը աջակցության հեռագրեր են հղում հայ պատգամավորներին:

Ի վերջո պայքարը արդյունք է տալիս. ոչ իսլամների զինվորագրության խնդրի քննարկումն ունենում է դրական ավարտ: Անցնում է ժամանակը, և արդեն 1915-ի ապրիլի 10-ին հայտնի է դառնում, որ կառավարությունը հրամայել է հավաքել հայ զինվորների զենքերը: Դարձյալ սկսվում են վիճաբանությունները, սակայն հայ երեսփոխաններն արդեն զգում էին, որ իրենք գտնվում են գործող հրաբխի վրա: Իրենց համարելով «հայ իթթիհատական մեպուսներ»¹⁵, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները Չոհրապի և Վարդգեսի ղեկավարությամբ որոշում են դիմել իթթիհատի ղեկավարներին՝ հայ զինվորների զենքը իրենց ձեռքին թողնելու պահանջով՝ «ինքզինքնին ջարդերե ազատ պահելու նպատակաւ»¹⁶:

Խորհրդարանում Չոհրապի բարձրացրած հարցերից կարևոր էին նաև հարստահարությունների դադարեցման և հայաբնակ նահանգների ապահովության խնդիրները: Այս հարցերը ևս խորհրդարանի տասը հայ պատգամավորները բազմաթիվ անգամներ բարձրացնում և օրինավոր լուծում են պահանջում:

12 Նույն տեղում, էջ 195:

13 Նույն տեղում, էջ 245:

14 Նույն տեղում, էջ 253:

15 **Գրիգոր Չոհրապ**, Երկերի ժողովածու, յավելեալ հատոր (2), գիրք երկրորդ, աշխատասիրութեամբ Ալբերտ Շարուրեանի, Եր., 2004, էջ 307:

16 Նույն տեղում:

Դեռևս 1908 թ. հոկտեմբերի 17-ին, երբ հայ պատգամավորները որոշակի հույսեր էին կապում Օսմանյան սահմանադրության հետ, Ազգային ժողովում Չոհրապան այս հարցերի վերաբերյալ արտահայտել է իր ուրույն կարծիքը: Նա հարստահարությունները համարում էր ոչ թե չարաշահումներ, այլ ոճրագործություններ, որոնց արգելակման համար պետք է թագրիրով դիմել Բ.Գռանը: Ուստի կազմվում է մի բանաձև, որում գավառական հարստահարությունների մասին տեսակետ հայտնելու հետ միասին, առաջարկվում էր հայերից ու թուրքերից քննիչ հանձնախումբ ստեղծել և ուղարկել հայաբնակ գավառներ՝ «գեղծարար պաշտօնեաներու դեմ միջոցներ գործ դնելու»¹⁷ համար: Կառավարությունից պահանջվում էր նաև քննիչ հանձնախմբին հանձնարարել անմիջապես պաշտոնանկ անել գեղծումների մեջ հաստատված պաշտոնյաներին, վալիներին, «համիդիե» գնդերի սպաներին հեռացնել ոստիկանական և քաղաքացիական պաշտոններից, ձերբակալել ազդեցիկ չարագործներին և նրանց դատավարությունը փոխադրել Կ.Պոլիս: Հայկական գավառներում մոլեգնող սովը թեթևացնելու նպատակով առաջարկվում էր ժողովրդին ցորեն և սերմացու բաժանել, տուրքերի պարտքերը ջնջել, հայ գյուղացիներից հափշտակված հողերը վերադարձնել: Սակայն դրանով քննարկումը չավարտվեց:

Հարստահարությունների խնդիրը Հայոց Ազգային ժողովում ամենաշատ քննարկվող հարցերից էր նաև 1911-1912 թվականներին: 1911 թ. նոյեմբերի 25-ին կայացած քննարկման ընթացքում Չոհրապան պատմական ակնարկի միջոցով ներկաներին հիշեցրեց, որ Ազգային ժողովում առաջին անգամ այդ հարցն արծարծվել է Մ. Խրիմյանի պարարիարքության տարիներին և անվարան կերպով հայտարարեց, որ 1870 թվականից Հայաստանում ոչինչ չի փոխվել: «Հայաստանի մեջ ավազակություններ, մարդասպանություններ կընեին, յափշտակություններ և ասարառություններ կը գործեին, բռնաբարություններ կը կատարեին»¹⁸, որովհետև թուրքերը քրդերին գործիք էին դարձրել, նրանց հավատացնելով, որ իսլամն ունի բոլոր իրավունքները, կարող են աներկյուղ «կորոպտել և սպաննել քրիստոնեան»¹⁹:

Այն ժամանակ կառավարությունը բացահայտորեն քաջալերում էր չարագործներին: Քառասուն տարի անց ռեժիմի փոփոխությունը չէր կարող փոխել մարդկանց հոգեբանությունը, և Չոհրապան իբրև Օսմանյան խորհրդարանի անդամ, ցավով արձանագրում էր. «... իրական Սահմանադրութիւն մը դեռ հաստատուած չէ այս երկրին մեջ»²⁰: Սահմանադրության առաջին պայմանը և պահանջը համարելով հավասարությունը, Չոհրապան նշում էր, որ իսլամի և քրիստոնյայի միջև հավասարություն չկա նույնիսկ՝ Օսմանյան խորհրդարանում: Անհավասարության առաջին օրինակը համարելով Կիլիկիայի հայության կոտորածը՝ Չոհրապան նկատում էր, որ արդարություն հաստատելու համար Ադանա ուղարկված «գինուորական ատեանները միասին կախաղան բարձրացուցին ջարդողը և ջարդուողը»²¹:

Անհրաժեշտ է նշել, որ Կիլիկիո հայության կոտորածների հարցը Չոհրապան բազմաթիվ անգամներ արծարծել է թե՛ Ազգային ժողովում և թե՛ Օսմանյան

17 Գրիգոր Չոհրապ, գիրք Ե., էջ 82:

18 Գրիգոր Չոհրապ, գիրք Զ, էջ 112:

19 Նույն տեղում, էջ 113:

20 Նույն տեղում, էջ 115:

21 Նույն տեղում, էջ 116:

խորհրդարանում, նաև՝ Հակոբ Պապիկյանի թաղման սգահանդեսում և ամեն անգամ տեղի ունեցածը համարել է թուրքական կառավարության մեղքը:

Միաժամանակ, Ազգային ժողովում ունեցած իր ելույթում նա կարծես ցանկանում էր գապել իր հայրենակիցների զայրույթը՝ հարցին մոտենալով դիվանագիտորեն. «Օսմանեան խորհրդարանին մեջ հայ երեսփոխանը վայրկյան մը իսկ մոռնալու չէ հայ ազգին մասնատր դիրքը և իր խոսքերուն առաջ բերելիք արդիւնքն ալ լաւ կշռելու է բերան բանալէ առաջ»²²:

Արդեն այս նախադասությունը բավական է ցույց տալու, թե ինչ պայմաների մեջ են գործել հայ երեսփոխանները Օսմանյան խորհրդարանում: Մակայն դա չի խանգարել, որ նույն Չոհրապը 1911 թ. նոյեմբերի 28-ին անձամբ իր կողմից «Յիշատակագիր» ներկայացնի վարչապետ Մայիդ փաշային՝ հենց առաջին նախադասության մեջ արձանագրելով, որ Օսմանյան Մահմանադրության հռչակումից չորս տարի է անցել, սակայն «Անատոլուի հայաբնակ նահանգներու կացութեան մեջ բարելավման ոչ մեկ նշան երեւցած է»²³: «Յիշատակագիր» հեղինակն ապացուցում էր, որ նախորդ վարչակարգի աղետաբեր քաղաքականությունը շարունակվում է, անընդհատ խախտվում է հայերի հողային սեփականության իրավունքը, իսկ կառավարությունը չարագործներին չգտնելու և չդատելու քաղաքականություն է վարում: Ուստի Չոհրապը աներկյուղ հայտարարում էր. «Կառավարութեան նպատակը Անատոլուի նահանգները հայերէն պարպելն է, ստոյգ է, որ այդ նպատակը պիտի իրականանայ»²⁴: «Յիշատակագրում» նաև կոնկրետ միջոցներ էին առաջարկվում անդորրությունն ու կարգը վերականգնելու համար. մեծ իրավասություններ տալ նահանգապետերին, հայաբնակ նահանգներում նշանակել հայ նահանգապետ, հայերից լինեն քաղաքային և դատական պաշտոնյաների և ժանդարմների մի մասը, պաշտոնանկ անել անբարեհույս պաշտոնյաներին, համիդիե զորախմբերը մտցնել կանոնավոր բանակի մեջ, ձերբակալել հանցագործ աշիրեթապետերին, հայկական հեռավոր նահանգները կենտրոնի հետ կապել երկաթուղով:

Չոհրապը պահանջում էր նաև կարգավորել հողային հարաբերությունները, քանզի կայսրության գոյության ընթացքում քրդերն ու թուրքերը միշտ էլ գավթել են հայերի հողերը, հողագուրկ գյուղացին արտագաղթի է դիմել: Ուստի պետք է այնպես անել, որ վերադարձող գաղթական հայերը կարողանան իրենց հողերի տերը դառնալ, ոչ թե դրանք մնան քուրդ և թուրք ավատատերերին, և նրանք էլ սուրբ գանձեն հայերից: Ուշադրության արժանի է վարչապետ Մայիդ փաշային ուղղած «Յիշատակագրի» վերջաբանը, որտեղ իր ողջ կյանքը օսմանյան պետության օրենքներն ուսումնասիրած իրավաբանը և հասարակական ու ազգային գործիչը հայտարարում էր. «Հայութեան փրկութիւնը օսմանցիութեան փրկութեան մեջ է»²⁵: Գուցե դա դիվանագիտական արտահայտություն էր, քանզի Չոհրապը հույս էր հայտնում, թե իր առաջարկությունները կատարելուց հետո «օսմանեան պետութիւնը... դեպի ճշմարիտ սահմանադրութիւն կ'ընթանայ...»²⁶:

Այս «Յիշատակագրի» մի տարբերակը՝ առավել խիստ արտահայտություններով, «Թագրիք ներկայացուած Բ.Դռանը» խորագրով, 1912 թ.

22 Նույն տեղում, էջ 123:
23 Նույն տեղում, էջ 128:
24 Նույն տեղում, էջ 133:
25 Նույն տեղում, էջ 136:
26 Նույն տեղում, էջ 137:

փետրվարի 14-ին Ձոհրապը հանձնում է կառավարությանը: Թագրիի հեղինակը Բ.Դռան ուշադրությունը հրավիրում էր «հայկական նահանգներու վրա, ուր ներքին քաղաքական ու ընկերային վիճակը այն աստիճան անհանդուրժելի դարձած է, որ մեզի իրավունք կուտա վտանգուած տեսնելու որքան պետութեան, նույնքան եւ հայ ժողովրդի շահերը»²⁷: Ձոհրապը նշում էր, որ 1872-1876 թթ. ընթացքում Հայոց պատրիարքարանը, նաև գավառական առաջնորդարանները բազմաթիվ տեղեկագրեր են ներկայացրել իշխանություններին՝ ահավոր հարստահարությունների վերաբերյալ, բայց օրինավոր գանգատներն անլսելի են մնացել կառավարության կողմից: Այդ պատճառով տեղական իշխանությունները ավելի են սաստկացրել իրենց զեղծումները և նույնիսկ իսլամի օրենքով հիմնավորել իրենց հափշտակությունները: Սահմանադրության հռչակումով հայությունը ջանաց մոռանալ անցյալի արհավիրքները, հուսալով, որ «նոր ռեժիմը... իր առաջին պարտականություններէն մին պիտի համարեր հայաբնակ նահանգներու անմիջական բարեկարգութեան հոգն ու գործադրութիւնը»²⁸:

Ու թեև կառավարության առաջին քայլերը հույսեր ներշնչեցին տառապյալ հայությանը, սակայն դրանք շուտով ի դերև ելան. հայերին վիճակվեց այնպիսի սոսկալի արհավիրք, որը Ձոհրապի բնութագրումով՝ գերազանցեց «համիտեան շրջանի պատմական արիւնահեղութիւններն ու տառապանքները»²⁹: Դա Կիլիկիայի հայության սարսափելի սպանդն էր, բարբարոսական ջարդը, որը Ձոհրապի խոսքերով՝ արատավորեց «Օսմանեան սահմանադրութեան մաքուր էջերը»³⁰: Ավագակախմբերը նորից սկսեցին համարձակ ասպատակությունները, նորից ավելացան բռնապետական տուրքերը, բռնություններն ու բռնի իսլամացումը: Իսկ Օսման փաշայի մնան հանցագործ պաշտոնյաներն ու զինվորականները՝ որոմ սերմանողները, անպատիժ մնացին:

Թագրիի մեջ Ձոհրապը ներկայացնում էր հայտնի ոճրագործների մի հսկայական ցուցակ, որոնց մի մասը թեև արդեն ձերբակալված էր, բայց նրանց դատը չէր կազմակերպվում և երկար ձգձգելուց հետո աստիճանաբար ազատում էին բանտից: Ծանր էր վիճակը մանավանդ՝ Բաղեշի, Վանի, Դիարբեքիի և Խարբերդի նահանգներում, որտեղ բացարձակապես գոյություն չուներ կյանքի, գույքի, պատվի ապահովություն: Ձոհրապը մանրամասն (11 կետով) նշում էր, թե ի՞նչ իրավախախտումներ են կատարվել, ու՞մ կողմից և ինչպե՞ս պետք է պատժել հանցանքներ թույլ տված բարձրաստիճան պաշտոնյաներին:

Ձոհրապը կոնկրետ միջոցառումներ է առաջարկում նաև «հողային հարցը» կարգավորելու ուղղությամբ (7 կետ), մատնանշում «նախարարաց ժողովի կատարելիք գործողությունները»³¹: Նա ներկայացնում է 16 հոդվածից բաղկացած մեծ փաթեթը, և ընդգծում, որ Սահմանադրական հիմունքներով գործադրելու դեպքում «գաւառի իշխանութեանց իրաւասութիւնը կընդարձակուի»³²: Դրա համար

27 Նույն տեղում, էջ 150:

28 Նույն տեղում, էջ 152

29 Նույն տեղում, էջ 153:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, էջ 160:

32 Նույն տեղում, էջ 165: Ցանկանում ենք շնորհակալությամբ նշել բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Շարուրյանի հետազոտական աշխատանքը, որի շնորհիվ նա ի մի է բերել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Հայոց Ազգային ժողովի ատենագրություններում, Գրականության և արվեստի թանգարանի արխիվային ֆոնդերում պահպանված այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են Գրիգոր Ձոհրապի հասարակական, իրավաբանական գործունեությանը և հրատարակել մեծ գրողի «Երկերի» Ե և Ձ հատորներում:

դատական պաշտոնյաներն ու «քաղաքային շրջուն քննիչները» իրավունք պետք է ստանան հսկել բոլոր պաշտոնյաներին և հարկ եղած դեպքում «անարժան և զեղծարար» անձանց ազատել պաշտոնից:

Բազմաթիվ են այն խնդիրները, որոնց լուծմանը մասնակցել և ելույթ է ունեցել Ազգային Ժողովի երեսփոխան և Օսմանյան խորհրդարանի անդամ Գրիգոր Ջոհրապը: Հարցեր կան, որ Ջոհրապը սկզբում բարձրացրել է Ազգային ժողովում, ապա՝ Օսմանյան խորհրդարանում. **գավառական հարստահարությունների, զինվորական տուրքի, հողային խնդրի, Կիլիկիայի հայության կոտորածների, Օսմանյան սահմանադրության վերափոխության մասին** և այլն, և այլն: Հարցեր կան, որ բարձրացվել են սուսկ Օսմանյան խորհրդարանում՝ **հին վարչակարգից տուժածների մասին, բյուջեի, դատարանների և դատական օրենքի, իթթիհատի և իթիլաֆի մասին**: Իսկ գուտ ազգային հարցերը բարձրացվել են Հայոց Ազգային ժողովում. **ամուսնական, կրթական խնդիրներ, կովկասահայ բանտարկյալների խնդիրը (ՀՅ Դաշնակցության գործով), կաթողիկոսական ընտրությունների հարցը**:

Ընթերցելով Հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում հնչած Ջոհրապի ելույթները, ապշում ես նրա անսահման եռանդի, գիտական ունակությունների, հարցերի իմացության, հայրենասիրության, խիզախության, ողջամտության, անլուծելի խնդիրների լուծումը փնտրելու կարողությունների վրա: Չկա մի նիստ, որտեղ Ջոհրապը ելույթ չի ունեցել, չկա մի հարց, որի մասին իր կարծիքը չի հայտնել: Նա ոչ միայն հայության շահերի պաշտպան էր, այլև ազգի ներսում պառակտումները վերացնող հմուտ հաշտարար: Իր ելույթներում Ջոհրապը բազմիցս պահանջել է մի կողմ դնել կուսակցական տարածայնությունները և միաբանվել ազգային շահերի շուրջ:

Բավական է կարդալ 1912 թ. դեկտեմբերի 21-ի նրա ելույթը՝ ի պաշտպանության հայոց նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանի, որպեսզի գաղափար կազմենք ոչ միայն Ջոհրապի փաստաբանական ունակությունների, այլև մարդկային ազնվության ու լայնախոհության մասին: Օսմանյան հեղաշրջումից հետո՝ 1908-ից մինչև 1912 թ. դեկտեմբերի 21-ը, Կ. Պոլսո նախկին պատրիարք Մ. Օրմանյանը ամբաստանյալի վիճակում փակված էր իր տանը և կյանքի հարվածներին դիմագրավելու համար զբաղվում էր գիտական գործունեությամբ: Նա մեղադրվում էր Աբդուլ-Համիդին հնազանդ ծառայելու և ազգային շահերը ոտնահարելու մեջ:

Ջոհրապը, որը հետևել էր Մ. Օրմանյանի ազգային գործունեությանը 1880-ականների սկզբից, նրա մասին գրել հողված-ակնարկ «Ծանոթ դեմքեր» ժողովածուի մեջ, ներկայացնում է Կարինում Օրմանյանի ծավալած ազգային-հեղափոխական, ապա՝ հոգևորական գործունեությունը, մատնանշում Աբդուլ-Համիդին երբեմն համակերպվելու, երբեմն զգուշորեն դիմադրելու քաղաքականությունը և անհամաձայնությունն հայտնում Ազգային ժողովում նրա հարցը քննարկողների հետ: Ջոհրապը հարց էր ուղղում Ազգային ժողովի անդամներին. հինգ տարի է, ինչ «Սահմանադրությունը գործադրելու կատարելապես անհամարժեցանք», արդյոք գործադրվո՞ւմ են արդարության գոնե տարրական պայմանները: Նա նախատում էր իր գործընկերներին, որ դատում են մի անձնավորության, որը չի կարող հերքել իրեն ներկայացվող մեղադրանքները՝ բացակա լինելու պատճառով, և հանգում այն եզրակացության, որ չնայած

ԾՈՒՂՈՒՄ

Գ. (Թ) ԳԱՐԻ, ՔԻՎ 4 (36) ԽՈԿԵՆՏԵՐ-ՆԵԿԵՆՏԵՐ, 2011

ՎԵՄ ԽԱՆՏԱԿՅԱԿԱՆ ԽԱՆՏԱ

Համիդի գահակալումը շարունակվել է մինչև 1908 թ., բայց հայկական զանգվածային շարժերը ընդհատվել են 1896 թվականին և Օրմանյանի պատրիարքության տարիներին ոչ մի կոտորած չի եղել: Գտնելով, որ Օրմանյանը հետևել է համակերպության քաղաքականությանը, Չոհրապը նշում էր, որ դա «այն ժամանակի պայմաններուն նայելով՝ պարտադրական քաղաքականութիւն մըն էր»: Ուստի շեշտելով, որ նախկին պատրիարքը «վերջին հինգ տարուան կեանքը և իր հոգեկան տառապանքը... լուրջամբ և ազգօգուտ աշխատութիւններովը անցուց», ընդգծելով «ազգին մատուցած շատ մը ծառայութիւններ», Ազգային ժողովին առաջարկում էր «ազատ կացուցանել Օրմանեան սրբազանը իրեն դեմ եղած բոլոր ամբաստանութիւններէն»³³: Չոհրապն անաչառ գնահատական էր տալիս Օրմանյանի գործունեությանը, փրկում նրան ամբաստանյալի կարգավիճակից՝ հնարավորություն տալով, որ վերջինս իր հմուտ գրչով ստեղծի պատմագիտական արժեքավոր գործեր :

Չոհրապը շարունակեց իր գործունեությունն Օսմանյանի խորհրդարանում նույնիսկ 1915 թ. սկզբներին՝ մինչև արյունալի ապրիլի վերջը: Բազմաթիվ մտերիմներ նրան առաջարկեցին՝ քանի դեռ ժամանակ կար, հեռանալ Թուրքիայից: Չոհրապը մերժեց բոլոր առաջարկությունները, գտնելով, որ իր պարտքն է կիսել հարազատ ժողովրդի ճակատագիրը. «Չէ, փախչիլ չեմ կրնար, պարտքս է մինչեւ վերջը պատնեշին վրա կենալ»³⁴: Երբ հարցականի տակ էր դրված արևմտահայության գոյությունը, Չոհրապն իր կյանքի գնով ընդունում էր ամեն մի մարտահրավեր: Բավական է հիշել Թալեաթի երեսին շարտած նրա վերջին խոսքերը. «Օր մը հաշիվ պիտի պահանջվե ձեզմե և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»: Եվ երբ չարագործը հեզմանքով հարցնում է, թե ով պետք է լինի այդ հաշիվ պահանջողը, Չոհրապը արհաբար պատասխանում է. «Ես, իբր խորհրդարանի հայ մեպուս, ձեզմե հաշիվ պիտի պահանջեմ»³⁵: Իրավացի էր Արշակ Ալպոյանյանը, երբ նկատում էր, թե այդ խոսքերով Չոհրապը ստորագրեց իր մահվան դատավճիռը:

Այսպիսով՝ Հայոց Ազգային ժողովում և Օսմանյան խորհրդարանում Չոհրապն աշխատել է մեծ նվիրվածությամբ, ուժերի գերազույն լարումով: Օսմանյան խորհրդարանում հնչած նրա համարձակ քննդատական ելույթներն ու առաջարկություններն ապացուցում են, որ Չոհրապը եղել է **ազգի նվիրյալը**: 1912 թ. հունվարի 5-ին Կ. Պոլսի «Ժամանակ» թերթին տված հարցազրույցում նա քանիցս շեշտել է, որ գերադասում է ընտրվել իբրև հայության ներկայացուցիչ՝ «Ես օսմանցի ըլլալե առաջ հայ եմ»³⁶, և եթե հայությունը չցանկանա իր ընտրությունը, «Ես լուսագոյն կը սեպեմ երեսփոխան չըլլալ»³⁷: Նույն օրը «Լուսարձակ» թերթին տված հարցազրույցում Չոհրապն ավելի է մանրամասնել իր նպատակները՝ հայտնելով, որ իրեն նույնիսկ նախարարական պաշտոն է առաջարկվել, բայց ինքը մերժել է «անոր համար որ չհաւատացի, որ առաջարկուած այդ պաշտոնը կրնա իմ ազգիս արժանապատուութեանը հետ համեմատական ըլլալ»³⁸: Նա ընդգծում էր, որ հայությունը Օսմանյան խորհրդարանում պիտի ներկայանա իր

33 Նույն տեղում, էջ 237:

34 **Գրիգոր Չոհրապ**, Էջեր ուղեւորի մը օրագրէն, Իզմիր, 1922, էջ ԺԲ:

35 **Ա. Ալպոյանճեան**, Անհետացող դեմքեր. Գրիգոր Չոհրապի կեանքը եւ իր գործը, Կ. Պոլիս, 1919, էջ 245:

36 «Ժամանակ», 1912, Կ. Պոլիս, 5 յունուարի:

37 Նույն տեղում:

38 «Լուսարձակ», Կ. Պոլիս, 1912, 5 յունուարի:

«լավագոյն ու պարծենալի ուժերով»³⁹:

Իր ողջ գործունեութամբ Չոհրապն ապացուցեց, որ Օսմանյան խորհրդարանում հայերն, իսկապես, պատվավոր տեղ են գրավել՝ հարուցելով իշխող ազգի նախանձն ու ատելությունը:

Summary

GRIGOR ZOHRAB IN THE NATIONAL ASSEMBLY OF WESTERN ARMENIANS AND THE OTTOMAN PARLIAMENT

On the occasion of the 150th anniversary of his birth

Emma A. Kostandyan

Prominent Western Armenian writer, Grigor Zohrab was famous also as a lawyer. From the onset of his activities, he became well known for his brilliant ability as an attorney and won the favor of the people. Toward the end of 1888, Armenian voters from different regions put forth his name as a member of the Armenian National Assembly. However, due to the leader of the conservative committee of Constantinople, H. Nuryan and as a result of regressive powers who struggled against him, Zohrab's election was not successful until 1908. In August 1908 Zohrab, after difficult ordeals became a member of the Armenian National Assembly and in the end of November of the same year was elected as a member of the Ottoman Parliament. While, previous to this he had won many court cases, saving the lives of Armenian and Bulgarian figures, he thus began his social-political and national activities. Zohrab, by raising issues of pertinence and vital importance, because of his bold proposals in the Armenian National Assembly and in the Ottoman Parliament, he indeed became the real people's choice. Till the very end he remained on the barricades and shared the cruel destiny that was designated to the Western Armenians.

³⁹ Նույն տեղում: